ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/37 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ Շիրակի մարզի թվով 5 կրթական օբյեկտների (Գյումրու թիվ 8, Գյումրու թիվ 30, Մարալիկի թիվ 1, Կամոյի թիվ 2 հիմնական դպրոցներ, Արթիկի ՏՄԱԿ) հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.08.2022թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Արմեն Քոչարյան /բացող/
	Արտյոմ Պետրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/37 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/37 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Շախուլյան Շին» ՍՊԸ	shaxulyan5488@mail.ru
2	«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	i-construction@bk.ru
3	«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ	m.melqonyan@mail.ru
4	«Շինարար-97» ՍՊԸ	hovhannes.aharonyan@gmail.com
5	«ՈՒՅՈՒՏ ՍԵՆԹՐ» ՍՊԸ	uyut-centr@mail.ru
6	«Տարոն-ԳԳ» ՍՊԸ	taron.Baghramyan77@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշ-վային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները											
		«Շախուլյան Շին» ՍՊԸ		«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ		«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ		«Շինարար-97» ՍՊԸ		«ՈՒՅՈՒՏ ՍԵՆԹՐ» ՍՊԸ		«Տարոն-ԳԳ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ											
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	4657810	-	-	-	-	4135845.33	4135845.33	4565157	4565157	-	-	-	-
2	4682360	4669000	4669000	-	-	-	-	4214576	4214576	-	-	-	-
3	3475680	-	-	3458860	3458860	-	-	-	-	-	-	2800000	2800000
4	2418860	-	-	-	-	-	-	2371140	2371140	-	-	-	-
5	13549350	13510665	13510665	13261640	13261640	12524583.33	12524583.33	-	-	13300000	13300000	10700000	10700000

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ քան 2022թ օգոստոսի 12-ին, ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 12.08.2022թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Արմեն Քոչարյան /բացող/

Արտյոմ Պետրոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«Շախուլյան Շին» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնի Ծավալաթերթ-նախահաշվի 1-ին բաժնի 28-րդ կետում «Ծավալը» և «Միավորի ընդհանուր արժեքը» սյունակներում լրացված թվերի արտադրյալը չի համապատասխանում «Ընդհանուր արժեքը» սյունակում լրացված թվին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 **«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում է մասնակցի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն Հավելված N 1.3-ի:

Ներկայացված մնացած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի Ծավալաթերթ-նախահաշվի 8-րդ բաժնի անվանումը ընթեռնելի չէ, բացի այդ, նույն բաժնի 24-րդ կետում «Ծավալը» սյունակում լրացված թիվը չի համապատասխանում հրավերով նախատեսված թվին:
- Գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնի Ծավալաթերթ-նախահաշվի 4-րդ բաժնի 2-րդ կետում «Ծավալը» սյունակում լրացված թիվը չի համապատասխանում հրավերով նախատեսված թվին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 **«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարությունում թերի է նշված չափաբաժինների համարը, մասնակցի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հավելվածի համարը սխալ է նշված, հղում է կատարված գոյություն չունեցող Հավելված 1.1-ին:
- Հավելված N 1.3-ում թերի է լրացված իրական շահառու հանդիսացող Արման Այվազյանի հաշվառման հասցեն:
- Գնային առաջարկի «Արժեք» սյունակի և Ծավալաթերթ-նախահաշիվների ընդամենը (ԱԱՀ-ն չներառված) տողերում լրացված թվերը չեն համապատասխանում միմյանց:
- Գնման ընթացակարգի 1-ին և 5-րդ չափաբաժինների Ծավալաթերթ-նախահաշիվների բոլոր բաժիններում բացակայում են «ընդամենը» տողերի արժեքները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.4 **«Շինարար-97» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի Ծավալաթերթ-նախահաշվի 11-րդ բաժնի 9-րդ կետում «Ծավալը» սյունակում լրացված թիվը չի համապատասխանում հրավերով նախատեսված թվին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.5 «ՈՒՅՈՒՏ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնի Ծավալաթերթ-նախահաշվի «Ծավալը» և «Միավորի ընդհանուր արժեքը» սյունակներում լրացված թվերի արտադրյալը չի համապատասխանում «Ընդհանուր արժեքը» սյունակում լրացված թվերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.6 **«Տարոն-ԳԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում են գնման ընթացակարգի 3-րդ և 5-րդ չափաբաժնի մասով Ծավալաթերթ-նախահաշիվները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7,1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1-ից 6.6-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Հանձնաժողովի *հաջորդ* նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

8.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2022թ օգոստոսի 16-ին, ժամը 16:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 16.01.2022թ. ժամը 16:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Արմեն Քոչարյան /բացող/
	Արտյոմ Պետրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

9. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

9.1 Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.1-ից 6.6-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

10.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով՝

Ընտրված մասնակից ճանաչել **«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ-ին**,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Շինարար-97» ՍՊԸ**–ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2-րդ չափաբաժնի մասով՝

Ընտրված մասնակից ճանաչել **«Շինարար-97» ՍՊԸ**-ին,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Շախուլյան Շին» ՍՊԸ**–ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3-րդ չափաբաժնի մասով՝

Ընտրված մասնակից ճանաչել **«Տարոն-ԳԳ» ՍՊԸ**-ին,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ**–ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4-րդ չափաբաժնի մասով՝

Ընտրված մասնակից ճանաչել **«Շինարար-97» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5-րդ չափաբաժնի մասով՝

Ընտրված մասնակից ճանաչել **«Տարոն-ԳԳ» ՍՊԸ**-ին,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ**–ին,

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ**–ին,

4-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՈՒՅՈՒՏ ՍԵՆԹՐ» ՍՊԸ**–ին,

5-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Շախուլյան Շին» ՍՊԸ**–ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

11. Գնահատման արդյունքների մասին.

11.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց /նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Արմեն Քոչարյան

_____ Արտյոմ Պետրոսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/